



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ  
БЮЛЛЕТЕНЬ

№ 2

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում  
գետեղված տեղեկությունները  
համարվում են հրապարակված 2012 թվականի փետրվարի 27-ից

ԳՅՈՒՏԵՐ .....	4, 48
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>	6, 50
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ .....	12, 55
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>	14, 57
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	16, 59
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին .....</i>	18, 61
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....	19
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին .....</i>	21
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին .....</i>	40
ՑՈՒՑԻՉՆԵՐ .....	41
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	43
ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ .....	62

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
 Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
 Тел. (374 10) 563-258 отдел приема заявок  
 Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

## СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 48
Сведения о выданных патентах.....	6, 50
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	12, 55
Сведения о выданных патентах.....	14, 57
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	16, 59
Сведения о зарегистрированных промышленных образцх.....	18, 61
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	19
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания .....	21
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	40
УКАЗАТЕЛИ.....	41
СООБЩЕНИЯ.....	43
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	62

## CONTENTS

INVENTIONS.....	4, 48
Information on granted patents.....	6, 50
UTILITY MODELS.....	12, 55
Information on granted patents.....	14, 57
INDUSTRIAL DESIGNS.....	16, 59
Information on registered industrial designs.....	18, 61
TRADE MARKS.....	19
Information on registered trade marks and service marks .....	21
Information on renewal of effect of trademark registration .....	40
INDEXES.....	41
REPORTS.....	43
TWO-LETTER CODES.....	62

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

- 11** արտոնագրի համարը
- 13** փաստաթղթի տեսակի կոդը  
A գյուտի արտոնագիր  
B արտոնագրաունակության մասին եզրակացություն
- 21** հայտի համարը
- 22** հայտի ներկայացման թվականը
- 23** ցուցահանդեսային առաջնության թվականը
- 31** առաջին հայտի համարը
- 32** առաջին հայտի ներկայացման թվականը
- 33** երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
- 45** գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
- 51** միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54** գյուտի անվանումը
- 56** տեղեկատվության աղբյուրներ
- 57** գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
- 62** ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71** հայտատուն, երկրի կոդը
- 72** գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 73** արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
- 74** արտոնագրային հավատարմատար
- 85** միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86** միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
- 87** միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

**Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին**

(51) **(2012.01)** (11) **2596** (13) **A**  
**A01B 3/00**

(21) **AM20100090** (22) **09.07.2010**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Արամ Արսենի Հովհաննիսյան (AM), Սիմոն Մամբրեի Սիմոնյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Քարքարոտ հողերի գութան**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաներին:

Քարքարոտ հողերի գութանն ունի կախոցի համակարգ, իրան, շրջանակ, դրան հողակապորեն ամրակցված հիդրոգլան: Գութանն ունի խոչընդոտը շրջանցող հանգույց, որն ունի շրջանակին կոշտ ամրակցված կալունակ, կալունակի միջով անցկացված սոնի: Սոնին հողակապորեն մեկ ծայրով ամրակցված է հիդրոգլանին, իսկ մյուս ծայրով պահանգի ծայրամասին, ընդ որում, կալունակից վերև ընկած հատվածամասը սոնուն կոշտ ամրակցված է լծակով: Սոնու մյուս ծայրը միակցված է կարգավորիչ զսպանակներին:

Ապահովվում է վարի բարձր որակ, 1 նկ.:

(51) **(2012.01)** (11) **2597** (13) **A**  
**A61K 36/00**

(21) **AM20110164** (22) **18.11.2011**

(71) Ղուկաս Ուլիխանյան (AM)

(72) Ղուկաս Ուլիխանյան (AM)

(73) Ղուկաս Ուլիխանյան, 0072, Երևան, Միկոյան 25, բն. 18 (AM)

(54) **Բերանի խոռոչի ողողման միջոց**

(57) Գյուտը վերաբերում է դեղագործության բնագավառին, մասնավորապես՝ բերանի խոռոչի հիգիենայի միջոցներին և կարող է կիրառվել որպես միջոց բերանի խոռոչի բորբոքումների կանխարգելման և բուժման համար:

Միջոցն իրենից ներկայացնում է դեղաբույսերի տերևների ջրասպիրտային թուրմ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ.%. եղեսպակ՝ 0.38 – 6.25, սրոհունդ՝ 0.38 – 6.25, արջընկույզ՝ 0.38 – 6.25, թորած ջուր՝ 18.75 – 22.81, էթիլային սպիրտ՝ 62.50 – 76.05:

Ընդլայնվում է բերանի խոռոչի հիգիենայի միջոցների տեսականին:

(51) **(2012.01)** (11) **2598** (13) **A**  
**A61K 36/00**

(21) **AM20110151** (22) **03.11.2011**

(71) Ղուկաս Ուլիխանյան (AM)

(72) Ղուկաս Ուլիխանյան (AM)

(73) Ղուկաս Ուլիխանյան, 0072, Երևան, Միկոյան 25, բն. 18 (AM)

(54) **Մազերի ամրացման և աճի խթանման միջոց**

(57) Գյուտը վերաբերում է կոսմետոլոգիայի բնագավառին, մասնավորապես՝ դեղաբուսական հումքի հիման վրա մազերի խնամքի միջոցներին և կարող է կիրառվել որպես միջոց մազաթափությունից և ճաղատությունից ազատվելու համար:

Միջոցը պատրաստված է լոսյոնի ձևով և իրենից ներկայացնում է եղինջի, գիհու, գայլուկի, կոստուկի, օշինդրի և կատվալեզվի խառնուրդի ջրասպիրտային թուրմ, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. %. եղինջ՝ 0.38 – 5.26, գիհի՝ 0.38 – 5.26, գայլուկ՝ 0.38 – 5.26, կոստուկ՝ 0.38 – 5.26, օշինդր՝ 0.38 – 5.26, կատվալեզու՝ 0.38 – 5.26, թորած ջուր՝ 15.81 – 22.53 և իզոպրոպիլ կամ էթիլ սպիրտ՝ 52.63– 75.1:

Միջոցն արդյունավետ կերպով կանխարգելում է մազաթափությունը և մասնակիորեն կամ լրիվությամբ վերականգնում է մազերը ճաղատության դեպքում, պիտանի է ցանկացած մազերի համար և չունի կողմնակի բացասական ազդեցություններ:

(51) (2012.01) (11) 2599 (13) A  
C03C 10/00

(21) AM20110142 (22) 17.10.2011

(71) Կարեն Արամի Նալբանդյան (AM), Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)

(72) Կարեն Արամի Նալբանդյան (AM), Նորա Մովսեսի Հարությունյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)

(73) Կարեն Արամի Նալբանդյան, 0025, Երևան, Չարենցի 171 (AM), Նորա Հարությունյան, 0041, Երևան, Էրեբունու 11, բն.30 (AM), Նիկոլայ Կնյազյան, 0012, Երևան, Վաղարշյան 21, բն. 26 (AM)

(54) **Ապակի՝ ապակեբյուրեղային սեգնետո-էլեկտրիկ նյութերի ստացման համար**

(57) Գյուտը վերաբերում է ապակեբյուրեղային սեգնետոէլեկտրիկ նյութերի ստացման համար ապակիների բաղադրությանը, որոնք կարող են կիրառվել նյութաբանության, էլեկտրոնային սարքաշինության և լազերային տեխնիկայում: Ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, մոլ. %.  $B_2O_3$ ՝ 58.50 - 70.20,  $BaO$ ՝ 8.55 - 28.40,  $Al_2O_3$ ՝ 1.45 - 3.25,  $La_2O_3$ ՝ 2.25 - 6.50,  $AlF_3$ ՝ 2.50 - 8.15,  $LaF_3$ ՝ 4.50 - 13.40:

Ստացված է ապակի ցածր եփման և սիտալացման երկաստիճանային ջերմամշակման ջերմաստիճաններով, բարձր մեխանիկական ամրությամբ, ջերմակայունությամբ և թափանցելիությամբ՝ սպեկտրի տեսանելի և ՈւՄ տիրույթում:

(51) (2012.01) (11) 2600 (13) A  
C07C 243/00  
C07F 9/00

(21) AM20110156 (22) 09.11.2011

(71) «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Մառլենա Հովակիմյան (AM), Գայանե Գասպարյան (AM), Միքայել Մովսիսյան (AM), Մերի Գրիգորյան (AM), Ռիմա Պարոնիկյան (AM), Հրաչյա Ստեփանյան (AM)

(73) «ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0014, Երևան, Ազատության 26 (AM)

(54) **Հակամանրէային ակտիվություն ունեցող եռաֆենիլֆոսֆոնիոհալոգենիդալկանոնների ֆենիլիդրագոններ**

(57) Գյուտը վերաբերում է կենսաօրգանական քիմիային, մասնավորապես՝ նոր կենսաբանորեն ակտիվ հակամանրէային ակտիվություն ունեցող եռաֆենիլֆոսֆոնիոհալոգենիդալկանոնների ֆենիլիդրագոններին:

Միացությունները ստանում են քլորոֆորմում լուծված համապատասխան ֆոսֆոնիումային աղի և ֆենիլիդրագոնի փոխազդեցությամբ:

Միացություններն ունեն բարձր հակամանրէային ակտիվություն:

(51) (2012.01) (11) 2601 (13) A  
C07D 307/00

(21) AM20110152 (22) 04.11.2011

(71) Պետրոս Ղազարյան (AM), Տանյա Ավետիսյան (AM)

(72) Պետրոս Ղազարյան (AM), Տանյա Ավետիսյան (AM)

(73) Պետրոս Ղազարյան, 0012, Երևան, Սունդուկյան 23, բն. 83 (AM), Տանյա Ավետիսյան, 0005, Երևան, Տիգրան Մեծի պող. 40, բն. 46 (AM)

(54) **Միաժամանակ հակամանրէային և հակասնկային ակտիվություն ունեցող 4-բուտանօլիդների ածանցյալներ**

(57) Գյուտը վերաբերում է կենսաօրգանական քիմիային, մասնավորապես՝ միաժամանակ հակամանրէային և հակասնկային ակտիվություն ունեցող 4 - բուտանօլիդների ածանցյալներին՝ 2-ալիլ-2-էթօքսիկարբոնիլ - 3,4,4-եռմեթիլ - 3 - հիդրօքսիբուտան - 4-օլիդին և 2-պրոպիլ-2-էթօքսիկարբոնիլ - 3,4,4-եռմեթիլ - 3 - հիդրօքսիբուտան - 4-օլիդին:

Միացությունները ստանում են ալիլմալոնաթթվի կամ պրոպիլմալոնաթթվի երկէթիլէթերի նատրիումի էթիլատի միջավայրում երկմեթիլացետիլկարբինոլի հետ փոխազդեցությամբ:

Սինթեզված միացությունները ցուցաբերում են արտահայտված հակամանրէային և հակասնկային ակտիվություն:

(51) (2012.01) (11) 2602 (13) A  
C07D 487/00

(21) AM20110150 (22) 31.10.2011  
(71) Ռոբերտ Ղազարյան (AM), Լիդա Սահակյան (AM), Արտակ Թովմասյան (AM), Ղուկաս Ուլիխանյան (AM), Գրիգոր Գյուլխանդանյան (AM)  
(72) Ռոբերտ Ղազարյան (AM), Լիդա Սահակյան (AM), Արտակ Թովմասյան (AM), Ղուկաս Ուլիխանյան (AM), Գրիգոր Գյուլխանդանյան (AM)  
(73) Ռոբերտ Ղազարյան, 0082, Երևան, Ծովակալ Իսակովի պող.28, բն. 11 (AM), Լիդա Սահակյան, 0014, Երևան, Նազարեթ Սուրենյան 11բ, բն. 34 (AM), Արտակ Թովմասյան, 0724, Արարատի մարզ, Մասիս, 3-րդ թաղ. 16, բն. 29 (AM), Ղուկաս Ուլիխանյան, 0072, Երևան, Միկոյան 25, բն. 18 (AM), Գրիգոր Գյուլխանդանյան, 0002, Երևան, Եզնիկ Կողբացու 42, բն. 74 (AM)

**(54) Հակամանրէային ակտիվություն ունեցող պորֆիրինների արծաթե կոմպլեքսներ**

(57) Գյուտը վերաբերում է հետերոցիկլային միացությունների քիմիային, մասնավորապես՝ պորֆիրինների արծաթե կոմպլեքսներին, որոնք ունեն բարձր հակամանրէային ակտիվություն և կարող են կիրառվել բժշկության մեջ որպես հակամանրէային միջոցներ:

Սինթեզված են ֆեոֆիտին (a + b) Ag(II) կոմպլեքսը և մեզո-տետրա(4-N-բուտիլպիրիդիլ) պորֆիրինատո Ag(II) տետրանիտրատ կոմպլեքսը, որոնք ունեն բարձր հակամանրէային ակտիվություն: Կոմպլեքսները ստանում են ֆեոֆիտին (a + b) – ի կամ մեզո-տետրա(4-N-բուտիլպիրիդիլ)պորֆինի տետրաբրոմիդի փոխազդեցությամբ արծաթի նիտրատի հետ՝ քլորոֆորմ-մեթանոլ կամ մեթանոլ-էթանոլ լուծիչների համակարգերում:

(51) (2012.01) (11) 2603 (13) A  
E02D 27/00  
E04B 1/00

(21) AM20100108 (22) 06.08.2010  
(71) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Արամ Զալիկոյի Զուրաբյան (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան (AM)  
(72) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Արամ Զալիկոյի Զուրաբյան (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան (AM)

(73) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երևան, Գոգոլի 5, բն. 6 (AM), Արամ Զալիկոյի Զուրաբյան, 2001, Վանաձոր, Տիգրան Մեծի 15, բն. 3 (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երևան, Գոգոլի 5, բն. 6 (AM)

**(54) Սեյսմամեկուսիչ հենարան**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ շենքերի և կառույցների այն հիմնական տարրերին, որոնք ապահովում են սեյսմակայունությունը:

Սեյսմամեկուսիչ հենարանն ունի մետաղական կցաշորթեր, դրանց միջև տեղակայված հարթ հատակ, կոնական միջամաս ու հարթ շորթեր ունեցող մետաղյա ափսեաձև և ռետինե, միմյանց հաջորդող համառանցք օղակաձև շերտեր: Մետաղյա շերտերը տեղակայված են միմյանց զուգահեռ և հավասար հեռավորությունների վրա: Մետաղյա ափսեաձև շերտերից յուրաքանչյուրի հատակով և դրա վերին հարակից շերտի հարթ շորթով անցնող հարթությունների միջև եղած հեռավորությունը մեծ է զրոյից:

Ապահովվում է շենքերի և կառույցների սեյսմակայունությունը ցանկացած ուղղության և ամպլիտուդի մեծությամբ տատանումների և ցնցումների դեպքում, 2 նկ.:

(51) (2012.01) (11) 2604 (13) A  
E04B 1/00  
C04B 14/00  
B28B 5/00

(21) AM20110096 (22) 27.07.2011  
(71) «Կանազիտ Գ.Ա.Ֆ.» ԲԲԸ (AM)  
(72) Սուրեն Նշանի Գևորգյան (AM), Վահագն Սուրենի Գևորգյան (AM)  
(73) «Կանազիտ Գ.Ա.Ֆ.» ԲԲԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM)

**(54) Պատի ջերմամեկուսիչ պանելի պատրաստման տեխնոլոգիական գիծ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ շինարարությունում օգտագործվող պատի երկաթբետոնե շերտավոր պանելների արտադրությանը:

Պատի պանելի պատրաստման տեխնոլոգիական գիծը ներառում է տեխնոլոգիական հաջորդականությամբ տեղադրված և միմյանց



հետ փոխկապակցված կաղապարամած, դրա մեջ ծավալային մետաղական կարկասի տեղադրման համակարգ, խառնուրդ պատրաստելու համար նախատեսված ելանյութերի՝ ցեմենտի, ավազի ու հավելանյութերի բաժնավորիչներով զետեղարաններ և ջրի բաք, ջերմամեկուսիչ նյութի բաժնավորիչով զետեղարան իր մղման խողովակագծով, բետոնախառնիչ, ջերմամշակման համակարգ, ջերմային և էլեկտրական սարքավորումների աշխատանքի կարգավորման կառավարման վահանակ. համաձայն գյուտի, տեխնոլոգիական գիծն ունի երեսպատման դեկորատիվ քարե սալիկների պատրաստման ենթաճյուղային հոսքագիծ, որն ընդգրկում է քարի բլոկների տեղադրման հարթակ, փոխակրիչ, քարի բլոկների սղոցման, եզրակտրման, մակատեսքային դրվատման հաստոցներ, հավաքման պարզեցման ավազանին միակցված շլամակուտակիչ, քարե սալիկների շրջման հաստոցներ, փորվածքներ ու ծխնիների համար անցքեր փորող սարքեր և պատրաստի քարե սալիկները կաղապարամածի վրա շարելու էլեկտրամագնիսական հրիչ, ընդ որում ենթաճյուղային հոսքագիծն ունի թափոնների հավաքման ու պարզեցման ավազան և դրան միակցված շլամակուտակիչը, հավաքման ու պարզեցման ավազանը խողովակով միացված է բաժնավորիչով ջրի բաքին և սառը ջրի խողովակագծին, իսկ շլամակուտակիչը՝ բետոնախառնիչին, տեխնոլոգիական գիծը լրացուցիչ ունի նաև մետաղական կարկասի պատրաստման հանգույց, կաղապարամածը միացված է ջերմամշակման համակարգին, իսկ ջերմամշակման համակարգը՝ տաք ջրի խողովակագծի միջոցով ջրի բաքին:

Բարելավվում են ջերմամեկուսիչ հատկությունները, ընդլայնվում է տեխնոլոգիական գծի արտադրանքի տեսականին, ավելանում է պանելների ամրությունը, 1 նկ.:

(51) **(2012.01)** (11) **2605** (13) **A**  
**E04B 1/00**  
**E04C 2/00**

(21) **AM20110095** (22) **27.07.2011**  
 (71) «Կանազիտ Գ.Ա.Ֆ» ԲԲԸ (AM)  
 (72) Սուրեն Նշանի Գևորգյան (AM), Վահագն Սուրենի Գևորգյան (AM)

(73) «Կանազիտ Գ.Ա.Ֆ» ԲԲԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM)

(54) **Պատի ջերմամեկուսիչ պանելի պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ շինարարական ջերմամեկուսիչ պանելի պատրաստման եղանակին:

Պատի ջերմամեկուսիչ պանելի պատրաստման եղանակը ներառում է կաղապարի մեջ առաջին և երկրորդ մետաղական ցանցերի տեղադրում, երկաթետոնե կրող արտաքին և ներքին շերտեր ստանալու համար դրանց վրա լցնում են ցեմենտային շաղախ, երկաթետոնե արտաքին և ներքին երկաթետոնե շերտերի միջև տեղադրում են ջերմամեկուսիչ միջին շերտ: Համաձայն գյուտի, նախքան առաջին մետաղական ցանցի տեղադրումը կաղապարի հատակին շարում են երեսպատման դեկորատիվ սալիկներ և դրանցից յուրաքանչյուրը ճկուն կապի միջոցով միացնում առաջին մետաղական ցանցին, իսկ երկաթետոնե կրող արտաքին շերտի վրա տեղադրում են բետոնացված կողերով վանդակներից կազմված մետաղական կարկաս: Միջին ջերմամեկուսիչ շերտը տեղադրում են վանդակների կողերի բետոնացումից ստացված խորշերում, ընդ որում երկաթետոնե կրող արտաքին և ներքին շերտերի միջև տեղադրում են երկրորդ ջերմամեկուսիչ շերտ:

Բարելավվում են ջերմամեկուսիչ հատկությունները, պարզեցվում է պանելի կառուցվածքը և հեշտացվում է պանելի պատրաստման գործընթացը, 2 նկ.:

(51) **(2012.01)** (11) **2606** (13) **A**  
**E04B 1/00**

(21) **AM20110093** (22) **27.07.2011**

(71) «Կանազիտ Գ.Ա.Ֆ» ԲԲԸ (AM)  
 (72) Սուրեն Նշանի Գևորգյան (AM), Արմինե Բագրատի Ղուլյան (AM), Պետրոս Ավազի Ամրոյան (AM), Տիգրան Լեոնիդի Դադայան (AM)  
 (73) «Կանազիտ Գ.Ա.Ֆ» ԲԲԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM)

(54) **Հավաքովի-միաձույլ շինարարական կառուցվածք**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես, շենքի արտաքին պատերի կառուցվածքին:

Հավաքովի-միաձույլ շինարարական կառուցվածքն ունի հավաքովի երկաթբետոնե ջերմամեկուսիչ շերտավոր պանելներից կազմված պատ: Պատի հարակից ջերմամեկուսիչ պանելների ուղղաձիգ կողերի վրա արված են խորշեր: Խորշում տեղադրված է միաձույլ երկաթբետոնե սյուն, որը ջերմամեկուսիչ պանելներին է միակցվում մետաղական կապերի միջոցով: Պատն ունի վերին և ստորին հեծաններ, որոնցից վերինը տեղադրված է ջերմամեկուսիչ պանելի վերին նիստի վրա արված փորվածքում, իսկ ստորինը՝ ստորև դրված պանելի վերին նիստի փորվածքում: Հեծանները սյուների հետ միասին կազմում են ամբողջական միաձույլ հիմնակմախք պատի համար: Ուղղաձիգ հանգույցներում հարակից ջերմամեկուսիչ պանելները միմյանց և սյան հետ միացված են ամրանաձողերի, օղ ու կեռ ունեցող ճկուն լարային կապերի միջոցով: Հորիզոնական հանգույցներում ջերմամեկուսիչ պանելները միմյանց, վերին ու ստորին հեծանների հետ միացված են ամրանաձողերի, ճկուն լարային և խողովակաթիթեղային կապերի միջոցով:

Բարձրացվում է կառույցի հուսալիությունը, բարելավվում են ջերմամեկուսիչ հատկությունները, կրճատվում են ծախսերը, 7 նկ.:

Ըստ ջերմամեկուսիչ պանելներից հավաքովի-միաձույլ պատի կառուցման եղանակի չհանվող և հանվող կաղապարամածների միջև եղած տարածքում տեղադրում են ամրանային կմախք և մետաղական կապեր, ապա լցնում են բետոնային խառնուրդ, ընդ որում որպես չհանվող կաղապարամած օգտագործում են ջերմամեկուսիչ պանել: Պատ ստանալու համար միաձույլ երկաթբետոնե տարրից և նրան միակցված ջերմամեկուսիչ պանելից կազմված հանգույցները միակցում են իրար, ապա բետոնային խառնուրդի պնդացումից հետո հանովի կաղապարամածները հեռացնում են: Պանելների իրար հակադիր ուղղաձիգ կողային եզրամասերում արված փորվածքների և դրանց սահմանափակող հանվող կաղապարամածի միջև առաջացած ուղղաձիգ խոռոչի օգտագործմամբ նախապես պատրաստում են միաձույլ երկաթբետոնե սյուն: Սյունը և երկու կողմերից դրան միակցված ջերմամեկուսիչ պանելները վերևից սահմանափակում են միաձույլ երկաթբետոնե վերին հեծանով: Պանելների վերին հորիզոնական եզրամասերում արված փորքաձրների և հանովի կաղապարամածների միջև առաջացած խոռոչների մեջ ամրանային կմախք և մետաղական կապեր տեղադրելուց հետո, լցնում են բետոնային խառնուրդ:

Բարձրացվում է կառույցի հուսալիությունը, հեշտացվում է գործընթացը և բարելավվում են ջերմամեկուսիչ հատկությունները, 4 նկ.:

(51) (2012.01) (11) 2607 (13) A  
E04B 2/00  
C04B 11/00

(21) AM20110094 (22) 27.07.2011

(71) «Կանազիտ ԳԱՖ» ԲԲԸ (AM)

(72) Սուրեն Նշանի Գևորգյան (AM), Արմինե Բագրատի Ղուլյան (AM), Պետրոս Ավագի Ամրոյան (AM)

(73) «Կանազիտ Գ.Ա.Ֆ» ԲԲԸ, 0040, Երևան, Աճառյան 40ա (AM)

(54) **Ջերմամեկուսիչ պանելներից հավաքովի-միաձույլ պատի կառուցման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարությանը, մասնավորապես՝ ջերմամեկուսիչ պանելներից հավաքովի-միաձույլ պատի կառուցման եղանակին:

(51) (2012.01) (11) 2608 (13) A  
G01R 17/00

(21) AM20110143 (22) 18.10.2011

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Մարինկա Քաջիկի Բաղդասարյան (AM), Պեպո Հովհաննեսի Խաչատրյան (AM), Թամարա Գրիգորի Դաշյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Հոսանքաչափիչ սարք**

(57) Գյուտը վերաբերում է ինֆորմացիոն-չափիչ տեխնիկային և կարող է օգտագործվել

էլեկտրատեխնիկայում, ռադիոտեխնիկայում, էներգետիկայում և այլ բնագավառներում:

Հոսանքաչափիչ սարքն ունի հոսանքի տրանսֆորմատոր, տվիչ և ցուցիչ սարք: Տվիչն անկոնտակտ ջերմակերպափոխիչ է, հոսանքի տրանսֆորմատորը կասկադային է և իրականացված է առանց բացակի: Տրանսֆորմատորի առաջնային կասկադի երկրորդային փաթույթը փակված է հաղորդաթիթեղով, որն անցնում է երկրորդային կասկադի տորոիդային միջուկի անցքով: Երկրորդային կասկադի երկրորդային փաթույթը միացված է ջերմակերպափոխիչի տաքացիչին:

Բարելավվում են սարքի չափա-զանգվածային ցուցանիշները և տեխնոլոգիամիտությունը, 1 նկ.:

(51) (2012.01) (11) 2609 (13) A  
H01H 3/00  
H01H 50/00

(21) AM20100113 (22) 24.08.2010

(71) Անդրանիկ Հովհաննիսյան (AM)

(72) Անդրանիկ Հովհաննիսյան (AM)

(73) Անդրանիկ Հովհաննիսյան, 0017, Երևան, Սարիթաղի 6-րդ շարք 36 (AM)

(54) **Էլեկտրամագնիս**

(57) Գյուտը վերաբերում է էլեկտրական փոխանջատիչներին, մասնավորապես՝ էլեկտրամագնիսներին, որոնց միջոցով կարող են գործողության մեջ դրվել էլեկտրական հպակները:

Էլեկտրամագնիսը կազմված է միջուկից, դրա վրա տեղադրված կառավարման փաթույթից, լուծից և խարսխից: Կառավարման փաթույթի երկայնական հատվածքը սեղանաձև է, իսկ էլեկտրամագնիսի աշխատանքային օդային բացակը մոտ է սեղանի մեծ հիմքին:

Բարձրացվում է էլեկտրամագնիսի զգայունությունը, 1 նկ.:

**ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

**Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին**

(51) (2012.01) (11) 280 (13) Ս  
**B08B 9/00**  
**G01N 7/00**

(21) **AM20110163U** (22) **16.11.2011**

(71) Պետրոս Մեսրոպի Շատախյան (AM), Արմեն Պետրոսի Շատախյան (AM)

(72) Պետրոս Մեսրոպի Շատախյան (AM), Արմեն Պետրոսի Շատախյան (AM)

(73) Պետրոս Մեսրոպի Շատախյան, 0001, Երևան, Թումանյան 22, բն. 5 (AM), Արմեն Պետրոսի Շատախյան, 0070, Երևան, Երվանդ Քոչար 21/1, բն. 60 (AM)

(54) **Գազամուղով մաքրող մխոցի անցման ազդանշանիչ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է գազամուղով մաքրող մխոցի անցման, ավելի ճիշտ՝ գազամուղի հենանիշային (վերահսկչական) կետերի անցման ազդանշանիչ սարքերին:

Ազդանշանիչն ունի առաջին ծայրով խողովակաշարի մեջ ներկտրված խողովակաձև մետաղաձող, զգայուն տարր և մետաղաձողի երկրորդ ծայրին տեղակայված էլեկտրոնային հանգույց, որը կապված է զգայուն տարրի և դիսպետչերական կենտրոնի հետ: Զգայուն տարրը ճնշման անալոգային տվիչ է, որը փականի միջոցով տեղակայված է խողովակաձև մետաղաձողի երկրորդ ծայրին, իսկ էլեկտրոնային հանգույցը միկրոկոնտրոլեր է, որը անալոգաթվանշանային կերպափոխիչի միջոցով միացած է ճնշման տվիչին, կառավարող բլոկի միջոցով միացած է հեղուկաբյուրեղային ցուցասարքին և ընդունահաղորդիչ բլոկի միջոցով միացած է դիսպետչերական կենտրոնին: Ազդանշանիչն ունի նաև խողովակաձև մետաղաձողի փչամաքրման միջոց, որը կատարված է փականավոր արմունկի տեսքով և տեղակայված է ճնշման տվիչից առաջ:

Բարձրացվում է հուսալիությունը, ստեղծվում է ազդանշանիչի աշխատունակությունը ստուգելու հնարավորություն, 3 նկ.:

(51) (2012.01) (11) 281 (13) Ս  
**E02D 29/00**

(21) **AM20110137U** (22) **13.10.2011**

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վաչե Հովհաննեսի Թոքմաջյան (AM), Վալտեր Աշոտի Աթանեսյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տեղյան 105 (AM)

(54) **Կաղապարամած ջրհորի պատերի բետոնալցման համար**

(57) Կաղապարամածն ունի միմյանց միակցված, հարակից ու հակադիր կորագիծ վահաններ, վահանների հենարան և բանվորական դիրքում վահանները սևեռակող տարրեր: Վահանների հենարանն իրականացված է խցիկ ունեցող բանվորական հարթակի տեսքով, որն ունի հողակապով իրեն միակցված անկյունաձև թևեր: Վահանները լծակներով միակցված են հարթակի խցիկին: Հակադիր երկու վահանները միակցված են վերամբարձ մեքենայի մետաղաճոպանին ճարմանդների միջոցով, իսկ մյուս հակադիր երկու վահանները՝ շարժական ձվաձև օղակի միջոցով: Բանվորական դիրքում վահանները սևեռակող տարրերը կազմված են բռնակից, սեպաձև մասից ու բույթից և տեղակայված են վահանների վերին մասում արված ակոսներում: Հարթակն իր անկյունաձև հողակապային թևերով հենված է սևեռակող տարրերի սեպաձև մասով բետոնում առաջացած խոռոչներին:

Կրճատվում են կաղապարամածի մոնտաժման և ապամոնտաժման աշխատաձախսերը, արագացվում է բետոնալցման գործընթացը, 3 նկ.:

(51) (2012.01) (11) 282 (13) Ս  
**F03D 9/00**  
**H02K 7/00**  
**H02J 7/00**

(21) **AM20110089U** (22) **18.07.2011**

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Ստյոպա Ենոքի Մարգարյան (AM), Արմեն Արտաշեսի Մաթևոսյան (AM), Հովիկ Համայակի Գիշյան (AM), Վլադիմիր Ռուբենի Թարջումանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

**(54) Ինքնավար էլեկտրամատակարարման համակարգ**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է էլեկտրատեխնիկային, կարող է օգտագործվել տարբեր ոլորտներում, հիմնականում՝ չէլեկտրիֆիկացված տարածքներում:

Ինքնավար էլեկտրամատակարարման համակարգը շարժական ձևով տեղադրված

է կցանքի վրա և ունի հողմանիվ, օժանդակ սարքերով համալրված սինքրոգեներատոր, ինքնավար սնուցման աղբյուր, կուտակիչ մարտկոց և արևային էլեկտրակայան, որը կազմված է ֆոտոէլեմենտներից և նրանց միջև զուգահեռ տեղադրված թիթեղից, որոնք տեղակայված են շրջանակի վրա, որն ամրացված է արևային լուսավորությանը հետևող համակարգի էլեկտրաշարժիչին միացված ուղղահայաց լիսեռին: Գեներատորի լարման ռելեի, հպարկիչի և կայունարարի շնորհիվ հնարավորություն է ընձեռվում օգտագործել քամու էներգիան վերջինիս նվազագույն թույլատրելի արագության դեպքում:

Բարձրացվում են էլեկտրամատակարարման հուսալիությունն ու արդյունավետությունը, մեծացվում են համակարգի օգտագործման հնարավորությունները, 5 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ՆՄՈՒՇՆԵՐ**



**Արդյունաբերական նմուշներին վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
71	<i>հայտատուն(ները), երկրի կոդը</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

## Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

- (51) **25-03**      (11) **268**      (13) **S**  
 (21) **20110022**      (22) **05.10.2011**  
 (71) Լևոն Արայիկի Մարության (AM), Հովհաննես Մալխասյան (AM)  
 (72) Լևոն Մարության (AM), Հովհաննես Մալխասյան (AM)  
 (73) Լևոն Արայիկի Մարության, Երևան, Ամիրյան 7/1, բն. 6 (AM) Հովհաննես Գևորգի Մալխասյան, Երևան, Վարդանանց 10, բն. 50 (AM)  
**(54) Սուրճի և թեյի արագ պատրաստման և սպասարկման կայան**  
 (55)



1.2



1.1



1.3

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ**

**ТОВАРНЫЕ ЗНАКИ**

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար


## Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20110512** (111) **17979**  
 (220) **20.04.2011** (151) **17.01.2012**  
 (181) **20.04.2021**  
 (730) Անհատ ձեռնարկատեր Հասմիկ Ավագյան,  
 Երևան, Օհանովի 64շ., բն. 37, AM  
 (442) 20.05.2011  
 (540)



(526) «BEAUTY SALON» արտահայտություն  
 ինքնուրույն պահպանության օբյեկտ է:  
 (591) Նշանը պահպանվում է մուգ կարմիր,  
 սպիտակ և վարդագույն գունային համակ-  
 ցությամբ:  
 (511)  
 դաս 44. գեղեցկության սրահ:

(210) **20110516** (111) **17980**  
 (220) **20.04.2011** (151) **17.01.2012**  
 (181) **20.04.2021**  
 (730) Անհատ ձեռնարկատեր Ալեքսան Գևորգյան,  
 Երևան, Բաֆֆու 73/3, AM  
 (442) 22.06.2011  
 (540)



(526) «DESERT», «Ա/Ձ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ»,  
 «ԲԱՖՖՈՒ 73/3», «ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԿԵՏ,  
 ՕՐ» գրառումներն ինքնուրույն պահպանու-  
 թյան օբյեկտներ չեն:  
 (591) Նշանը պահպանվում է բաց և մուգ վար-  
 դագույն, կանաչ, սև և սպիտակ գունային  
 համակցությամբ:  
 (511)  
 դաս 30. խմորեղեն:

(210) **20110695** (111) **17981**  
 (220) **03.06.2011** (151) **17.01.2012**  
 (181) **03.06.2021**  
 (730) Նաիրե Պողոսյան, Երևան, Ավան, 7-րդ  
 փող. տուն 47/1, AM  
 (442) 07.07.2011  
 (540)



(554) Ծավալային նշան  
 (511)  
 դաս 33. ակոհոլային խմիչքներ (բացառու-  
 թյամբ գարեջրի):

(210) **20110776** (111) **17982**  
 (220) **23.06.2011** (151) **17.01.2012**  
 (181) **23.06.2021**  
 (730) Տիգրան Մարգարյան, Երևան, Շևչենկո 7,  
 բն. 20, AM  
 (442) 22.07.2011  
 (540)



*Sonat Cakes*

(526) «CAKES» գրառումն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:  
 (591) Նշանը պահպանվում է վարդագույն գույնով:  
 (511)  
 դաս 30. հրուշակեղեն:

(210) **20110921** (111) **17983**  
 (220) **28.07.2011** (151) **17.01.2012**  
 (181) **28.07.2021**  
 (730) «Դանաֆարմ» ՍՊԸ, Երևան, Կիևյան 1,  
 շին. 55, AM  
 (442) 20.08.2011  
 (540)

**ՓարմСовет**

(511)  
 դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամնալցման և ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. վնասատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում.

դաս 44. բժշկական ծառայություններ. անասնաբուժական ծառայություններ. կենդանիների և մարդկանց հիգիենիկ և կոսմետիկական ծառայություններ. գյուղատնտեսական, այգեգործական և անտառաբուծական ծառայություններ:

(210) **20110973** (111) **17984**  
 (220) **08.08.2011** (151) **17.01.2012**  
 (181) **08.08.2021**  
 (730) Պեպսիկո, Ինք., Հյուսիսային Կարոլինայի նահանգ, US  
 (442) 07.09.2011  
 (540)



(591) Նշանը պահպանվում է սև, կարմիր, կապույտ, սպիտակ և մոխրագույն գունային համակցությամբ:

(511)  
 դաս 32. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20110975** (111) **17985**  
 (220) **08.08.2011** (151) **17.01.2012**  
 (181) **08.08.2021**

(730) Պեպսիկո, Ինք., Հյուսիսային Կարոլինայի նահանգ, US  
 (442) 07.09.2011  
 (540)



(591) Նշանը պահպանվում է բաց և մուգ կանաչ, նարնջագույն և սպիտակ գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 32. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ալկոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20111047** (111) **17986**  
 (220) **22.08.2011** (151) **17.01.2012**  
 (181) **22.08.2021**

(730) «Էքսկլյուզիվ գրուպ» ՍՊԸ, Երևան, Ավան, Բաբաջանյան 21/1, AM  
 (442) 22.09.2011  
 (540)




(526) «EXCLUSIVE» և « GROUP» բառերն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է բաց նարնջագույն, սև և մոխրագույն գունային համակցությամբ:

(511)  
 դաս 29. միս, մսամթերք. կաթնամթերք. ձու.  
 դաս 30. քաղցրավենիք. հրուշակեղեն.  
 դաս 35. արդյունաբերական և տնտեսական ապրանքների ներկրում և արտահանում.  
 դաս 36. տարադրամի փոխանակման կետ.  
 դաս 37. ավտոտեխնասարկման կենտրոն. ավտովագման կետ. շինարարություն.  
 դաս 39. ավտոտրանսպորտային միջոցների վարձույթ. տաքսի ծառայություն. ներգնա և արտագնա տուրիզմի կազմակերպում և տոմսերի վաճառք.  
 դաս 42. նախագծում.  
 դաս 45. փաստաբանական ծառայություններ և իրավաբանական խորհրդատվություն:

(210) **20111063** (111) **17987**  
 (220) **26.08.2011** (151) **17.01.2012**  
 (181) **26.08.2021**

(730) «Շատո Արարատ Վինյարդ» ՓԲԸ, Երևան, Ամիրյան 1, AM  
 (442) 22.09.2011  
 (540)



(511)  
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):  
 (740) Ս. Կնյազյան

(210) 20111064 (111) 17988  
 (220) 26.08.2011 (151) 17.01.2012  
 (181) 26.08.2021

(730) «Շատո Արարատ Վինյարդ» ՓԲԸ, Երևան, Ամիրյան 1, AM  
 (442) 22.09.2011

(540)



(511)

դաս 33. ակոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(740) Ս. Կնյազյան

(210) 20111077

(111) 17989

(220) 01.09.2011

(151) 17.01.2012

(181) 01.09.2021

(730) «Եվրոպա» ՍՊԸ, Երևան, Արշակունյաց 67, AM

(442) 07.10.2011

(540)



(526) "EUROPE" բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է ոսկեգույն, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 35. շինանյութի մանրամեծաձախ վաճառք. կահույքի մանրամեծաձախ վաճառք.

դաս 43. հասարակական սննդի իրականացում, ռեստորանային համալիր:

(210) 20111084

(111) 17990

(220) 01.09.2011

(151) 17.01.2012

(181) 01.09.2021

(730) Պեպսիկո, Ինք., Հյուսիսային Կարոլինայի նահանգ, US

(442) 07.10.2011

(540)

**LAY'S MAX**

(511)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս և որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված և ջերմամշակման ենթարկված մրգեր և բանջարեղեն. դոնդող, ջեմեր, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ և կաթնամթերք. սննդային յուղեր և ճարպեր. կարտոֆիլալին չիպսեր. մրգերի, բանջարեղենի, պանրի, մսի, ընկույզի, կաղնու, պնդուկի հիման վրա խորտիկներ. մշակված ընկույզ, կաղին և պնդուկ. ուտելի սերմեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր և հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն և քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց. ալյուրի, եգիպտացորենի, հացահատիկների, բրնձի հիման վրա խորտիկներ. հացահատիկների մշակված սերմեր:

(740) Ալ. Նահապետյան

(210) 20111150

(111) 17991

(220) 15.09.2011

(151) 17.01.2012

(181) 15.09.2021

(730) Անհատ ձեռնարկատեր Նորայր Ալեքսանյան, 0047 Երևան, Նորք 2/2 նրբ./4, AM

(442) 07.10.2011

(540)



(511)

դաս 20. կահույք, հայելիներ, նկարների շրջանակներ. փայտից, խցանից, եղեգից, ուռենուց, եղջյուրից, ոսկրից, փղոսկրից, կետի բեղից, կրիայի զրահից, խեցուց, սաթից, սահափից, ծովի փրփուրից, այդ նյութերի փոխարինիչներից կամ պլաստմասսայից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում:

(740) Ա. Գալոյան



- (210) **20111156** (111) **17992**
- (220) **15.09.2011** (151) **17.01.2012**
- (181) **15.09.2021**
- (730) «Արտէքսիմ» ՍՊԸ, Երևան, Վարդանանց  
5ա, քն. 212, AM
- (442) 07.10.2011
- (540)



- (526) «RESTAURANT» բառը և «WINE SHOP»  
արտահայտությունն ինքնուրույն պահպա-  
նության օբյեկտներ չեն:
- (591) Նշանը պահպանվում է սև, սպիտակ և  
կանաչ գունային համակցությամբ:
- (511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. մասնավորապես՝ ակոհոլային խմիչքների, գինիների մանրամեծաձախ առևտուր.

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում. մասնավորապես՝ ռեստորանային և հանրային սննդի կազմակերպում, ճաշարաններ, սրճարաններ:

(740) Ա. Նազարյան

- (210) **20111178** (111) **17993**
- (220) **22.09.2011** (151) **17.01.2012**
- (181) **22.09.2021**
- (730) Արարատի կոնյակի գործարան «Ա.Կ.Զ.»  
ՍՊԸ, ք. Արարատ, Պուշկինի 12, AM
- (442) 07.10.2011
- (540)



- (511)
- դաս 32. գարեջուր. հանքային և գազավորված ջրեր և այլ ոչ ակոհոլային ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգահյութեր. օշարակներ և ըմպելիքների պատրաստման այլ բաղադրանյութեր.
- դաս 33. ակոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի).
- դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ:

- (210) **20111208** (111) **17994**
- (220) **29.09.2011** (151) **17.01.2012**
- (181) **29.09.2021**
- (730) «Արտէքսիմ» ՍՊԸ, Երևան, Վարդանանց  
5ա, քն. 212, AM
- (442) 21.10.2011
- (540)

## NOAH'S HOUSE ՆՈՅԱՆ ՏՈՒՆ ДОМ НОЯ

- (511)
